

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԲԱՌԱԿԵՐՏՈՒՄՆԵՐԸ ԼՅՈՒԴՎԻԳ ԴՈՒՐՅԱՆԻ

«ՄԱՇՏՈՏ» ՊՈԵՄՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ

Մանկավարժ. գիտ. թեկնածու, պ/պ

gayane.khalatyan.1958@mail.ru

khalatyangayane01@aspu.am

DOI: 10.57236/1829-0183-2024.2(31)-58

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվում են հեղինակային բառակերտումները անվանի բանաստեղծ Լ. Դուրյանի «Մաշտոտ» պոեմում: Հավատարիմ մնալով ժամանակաշրջանին և միջավայրին՝ հեղինակը կերտել է բազմաթիվ բառներ, որոնցում հատկապես հաճախադեպ են բարդ բառերը՝ երբեմն անհամատեղելի թվացող բառադրիչների զուգորդմամբ:

Բարդության մեջ դրանք հաճախ հանդես են գալիս փոխաբերական իմաստով: Աչքի են ընկնում նաև ածանցմամբ՝ գոյականներից և ածականներից կազմված բայերը:

Բանալի բառեր և բառակապակցություններ. անվանական բարդություն, վերլուծական բարդություն, փոխաբերություն, նորակազմ բառ, ածանցավոր նորակազմություն, հուզարտահայտչականություն, բաղադրատարր, անվանական բայ, խոսքային գունավորում, բառազուգորդում:

AUTHOR'S WORD CONSTRUCTIONS IN THE POEM

“MASHTOTS” BY L.DURYAN

GAYANE KHALATYAN

Philosophiæ Doctor in pedagogy

gayane.khalatyan.1958@mail.ru

khalatyangayane01@aspu.am

Abstract

In article we tried to examine the author's neologisms which can be found in the poem “Mashtots” by L. Duryan. Staying true to time and environment the author created words consisted of different elements, the combinations which are more frequently used metaphorically. Of all analytical compound words used in the poem nominal contrasts are used more widely.

The author also created interesting suffixal structures which brightly emphasize the poet's thoughts. The language of the poem is also distinguished in style due to using verbs derived from nouns and adjectives.

Key words and phrases: nominal complexity, analytical complexity, metaphor, neologism, derivational neologism, compound element, emotional expressiveness, nominal verb, lexical coloring, word combination.

**АВТОРСКИЕ СЛОВОТВОРЧЕСТВО В ПОЭМЕ
ЛЮДВИГА ДУРЬЯНА «МАШТОЦ»
ГАЯНЕ ХАЛАТЯН**

Кандидат педагогических наук, и/о. проф.
gayane.khalatyan.1958@mail.ru
khalatyangayane01@aspu.am

Аннотация

В статье мы попытались изучить авторские неологизмы, которые встречаются в поэме Л. Дурьяна «Маштоц». Оставаясь верным времени и окружению, автор создал разные сочетания составных слов, среди которых наиболее часто можно заметить сложные слова с сопоставлением, чаще всего использующиеся в виде метафор. Из аналитических усложнений в поэме более всего используются именные сопоставления.

Автор создал интересные суффиксальные сочетания, которые ярче показывают мысли поэта. Стиль речи еще больше подчеркивают глаголы, составленные из существительных и прилагательных.

Ключевые слова и словосочетания: номинальное сложение, аналитическое сложение, метафора, новообразование, суффиксальное новообразование слов, составной элемент, эмоциональная выразительность, номинальный глагол, лексическая окраска, сочетание слов.

Ներածություն

Շատերն են դիմել մաշտոցյան թեմային՝ Կորյունի «Վարք»-ից մինչև Սևակի «Եվ այր մի Մաշտոց անուն» պոեմը: Դուրյանն էլ փորձել է վերադառնալ չորրորդ դար և մաշտոցյան մեծ պատումի՝ մեր գրի իր ասքը հյուսել:

Պոեմը համակարգված սյուժե չունի, և ոչ էլ ձևն է նոր, բայց Մաշտոցի արարած երեսունվեց տառ-գինվորները՝ Ա նախերգից մինչև Բ վերջերգը, ոգի ոգու տված, միավորվել են ասք-պատումի հրաբորբ ու վեհ տարերքում ու ի վերջո հեղինակի տաղանդի քուրայում թրծվելով՝ դարձել ինքնատիպ մի

երկունք. ծնվեց Մաշտոցի մեծ արարման՝ հայոց գրի անմահությունը ծոներգող մի ստեղծագործություն [6, 131]:

Հեղինակն այլ նպատակ չի հետապնդել, քան մարմնավորելու հայոց ազգային հոգեբանությունն ու բարոյական արժեքները:

Հեղինակային բառակերտումների վերլուծություն

Դուրյանի «Մաշտոց» պոեմում հեղինակային բառակերտումները բազմազան են՝ բաղադրիչների իմաստային և բառակազմական տարբերակներով: Ժամանակաշրջանի բներանգ ստեղծելու և խոսքին պատկերավորություն հաղորդելու նկատառումով հեղինակը կազմում է նոր բառեր և բառազուգորդումներ հատկապես բառաբարդման եղանակով:

Բաղադրությունների ամենաբազմազան ձևերից պոեմում հաճախված են համադրական իսկական բարդությունները, որոնք ընդգծում են պոեմի բովանդակությունը, խորացնում բառակերտումների ոճական արժեքը: Ելնելով հոդվածի շրջանակներից՝ կանդրադառնանք մի քանի բառական միավորների քննությանը: Նկատենք, որ բանաստեղծը ստեղծել է այնպիսի կապակցություններ, որոնց բաղադրիչներն ունեն իմաստային մասնակի աղերսներ: Որոշ դեպքերում էլ բարդության մեջ գործածել է այնպիսի բաղադրատարր, որը բարդությանը հաղորդում է հոգեբանական-զգայական արժեք՝ այն կապելով ժամանակաշրջանի և միջավայրի հետ:

«Եվ գալիքների ծայնով *հեռական* // Դու մաքրում էիր Սերունդներ չարից» (էջ 301): «Եվ մեր անարատ շունչը ոսկեման // Տարածություն է դառնում *հեռաջին*» [6, 340]: «Մենք *հեռալուսն* մեր գոյության // Նոր կրակներ ենք վառում» [6, 338]:

Հեռական, հեռաջին, հեռալուսն բառամիավորները, ծուլվելով խոսքի ընդհանուր շղթային, մեծացնում են գալիքի հանդեպ մեր ժողովրդի տաճած հավատը:

¹ Հեղինակային բառակերտումները ճշտելիս օրինակները համեմատել ենք ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի», Է.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի», Ստ.Մալխասեանցի «Հայերեն բացատրական բառարանի» տվյալների հետ:

Բանաստեղծը իր բառակերտումներով փորձում է յուրովի ու նորովի բացահայտել մաշտոցյան այդ հրաշքի էությունը՝ իբրև հայ ժողովրդի մեծ գոյամարտի, նրա դարավոր հպարտ կեցության խորհրդանիշի:

«Որ մեր հոգու մեջ // Դու չսոսափես // Քո *հավերժախուժ* գարնանամուտով» [6, 304]: «Ե՛վ մուրճն էր, և՛ մուրճն էր // *Հաղթավարզ* ձիու պես Սալի՛ն դոփում» [6, 306]:

Հեռական – մակբայ + բայարմատ, *հեռաջին* – ածական + ածական, *հեռալեն* – մակբայ + բայարմատ, *հավերժախուժ* – մակբայ + բայարմատ, *հաղթավարզ* – ածական + գոյական մանրակաղապարներով բանաստեղծը կերտել է ածականներ, որոնք պոեմում գործածված են մակդրային արժեքով՝ մեծացնելով խոսքի պատկերավորությունը, մաշտոցյան հաղթանակի ուժը:

Իրենց բարեհնչունությամբ, ոճական արժեքով աչքի են ընկնում մի քանի այլ բաղադրատարրեր նույնպես:

Անհունապարած բառ-միավորը կերտվել է ածական + բայարմատ կաղապարով, որը պոեմում մեծ կշիռ է ստանում այն մեկնաբանությամբ, որ մենք, բանաստեղծի ոգեղեն խոսքի տարերքին գերի, անցնում ենք համարյա տիեզերական արագությամբ, ժամանակի կամուջներն այրելով, այն վեհ ու զարմանալի զգացումով, որ մեծ արարողը հայոց բոլոր սերունդների, նաև մեր ժամանակակիցն է. «Եվ դողանջում է Արև զանգի մեջ / *Անհունապարած* անունը քո» [6, 310]: «Մենք քեզանով *գալիքահոս* ճամփան գտանք, // Մաշտո՛ցդ սուրբ» [6, 335]:

Հեղինակային *անհունապարած* բառը կերտված է *անհունասույզ* բարդության համաբանությամբ (Աղայան, էջ 68, *անհունասույզ*, ած., (բնստ), անհունի, անհունության մեջ սուզված, սուզվող): Լ.Դուրյանը նախապատվությունը տալիս է *անհունապարած* ձևին: *Գալիքահոս* բառը կազմվել է գոյականի և բայահիմքի բաղադրումից:

Ածական + ածական կաղապարով կերտել է սրբապարզ ածականը, որի բաղադրիչները, կարելի է ասել, պատկանում են նույն իմաստային դաշտին: Մակդրային կիրառությամբ այս որոշիչը կերտված է սրբասուրբ ածականի համաբանությամբ և թանձրացնում է պատկերը. «վ նժույգի վրա // Քո *սրբապարզ* համբավը օրորել [6, 315]:

Բանաստեղծն անդրադառնում է նաև գրերի գյուտին առնչվող Վռամ-
շապուհ արքային, որի դերը արժևորելուն նպաստել է վերամբարձ ու հան-
դիսավոր ոճը. «Սասնա Ծռեր» էպոսին բնորոշ էպիկական շնչով է սկսում իր
խոսքը. «Եվ դառնում փառք տամ Վռամշապուհին, // Հազա՛ր փա՛ռք ասեմ,
// Բայց *արքայախիստ* զրահի ներքո // Սիրտ ուներ վսեմ» [6, 323]:

Հայտնի է, որ արդի հայերենում անվանական համադրական բարդու-
թյուններ հաճախ կազմվում են թե՛ բայական, թե՛ անվանական վերլուծական
բարդությունների բաղադրիչների կցումով [12, 110], [4, 273]: Բաղադրիչների
կցումով հեղինակը *գրերի գյուտ* բառակապակցության փոխարեն կերտել է
տառագյուտ բառամիավորը, որը պատումի մեջ ավելի է խտացնում բառի
իմաստը, մեծացնում նրա կշիռը. «Ե՛վ անդիմադիր, և՛ ուրախաձայն // Թողեց
քեզ, // Մաշտո՛ց, // Որ վսեմական քո *տառագյուտով* // Տաս մեր աշխարհին
ինքնություն հավերժ» [6, 323]: «Ու երբ *ձեռքապարզ* նա քեզ գիրկն առավ, //
Սրտամեջ զգաց, // Որ գրկել է նա // Իր հաղթանակը մե՛ծ, ամենամե՛ծ» [6,
323]:

Վկայված հատվածում *պարզած ձեռքերով* բառակապակցության փո-
խարեն Դուրյանը ստեղծել է *ձեռքապարզ* համադրական բարդությունը՝ գո-
յական + բայախիմք մանրակաղապարով, որը խոսքաշղթայում կիրառվել է
մակբայական արժեքով:

Մաշտոցի ստեղծած տառ-գինվորներն այստեղ հպարտ բազմել են
իրենց «գահին». հեղինակը *տառ* և *գորք* բաղադրիչները, որոնք իմաստային
աղերսներ չունեն, միավորում է՝ ամբողջության մեջ մեկ անգամ ևս ընդգծելով
երևույթի հոգեբանական-զգայական կողմը. ժամանակաշրջանի շունչը. «Քեզ
ծնեց ազգս, // Որ զորք ունենար, // Հուռթի *տառագորք*, // Որ այս աշխարհը
լույսով գրավեր // Ու դառնար հավետ լույսի երազող» [6, 279]:

Նույնպիսի երանգ ունեն *վեհ, վեր* միավորներով կերտված բարդու-
թյունները, որոնք ավելի են բարձրացնում էպիկականությունը՝ *աստված* հոմա-
նիշին. «Դու *վերապարզ*և ոգի լուսաբաց» [6, 331]:

² Աղայանի բառարանն ունի *աստվածապարզ* բառը, ած. (կրոն.) – աստծուց պարզևած [6, 116]:

Վերապարզ - գոյական + բայահիմք, *վեհապարզ* – գոյական + բայահիմք կաղապարներով կերտվել են ածականներ՝ մակդիրի իմաստով, որ նշված խոսքային շղթաներում տեղին է և պատճառաբանված:

Պոեմում տեղ են գտել նաև *սալանա* և *դև* բառերով կերտված բարդություններ. «Բայց որտեղի՞ց պիտի հավաքեիր, // Երբ *դիվապաշտ* իշխանները երկրից // Գիտեին հայրենիք ծախել և հղփանալ» [6, 315]: *Դիվապաշտ* բարդությունը կերտված է *դիվամուլ* բարդության համաբանությամբ է կազմված: «Իսկ տերտերները... դառած սև դևեր // *Սալանաբարո* ուտում էին մեր // Մարմին կորցրած միամիտ հոգին» [6, 329]:³

Պատումին նոր շունչ են հաղորդում *խոս* վերջնաբաղադրիչով բառերը, Հարկ է նշել, որ գոյականի, ածականի զուգակցությամբ և *խոս* բայահիմքով բաղադրված բարդությունները խոսքում հանդես են գալիս ածականական արժեքով: Նորակազմությունների կերտման մեջ հատկապես կարևորվում է համաբանությունը: Մեր լեզվում առկա *հայախոս*, *քչախոս*, *զազրախոս* և նման բարդությունների համաբանությամբ հեղինակն ստեղծել է բառամիավորներ:

Բանաստեղծը պատմական ոճավորման է հասնում *զանգախոս* բառամիավորով, որը վկայում է, թե ինչ է որոնում հեղինակը անցյալում՝ նշելով Բյուզանդիոնի և Տիգրոնի արանքում մեր երկրի ճգնվելը. «Տաճարներում մեր զանգախոս, // Օտարատառ գիրքն էր բաց, // Ու պատարագն օտարաձայն // Դարձնում էր քեզ ամպած» [6, 295]:

Այդպես նաև *արարչախոս* միավորը, որում կարևորն այն է, որ *արարիչ* և *խոս* բաղադրիչների միացումը բառակազմորեն արդարացվում է, որովհետև ժողովուրդը, հավատալով արարչին, մշտապես համակրանք է արտահայտել նրա նկատմամբ. «Վռամշապուհին // Փա՛ռք ասեմ հազար, // Որ եղավ այդքան // Ողջախոհ ու վեհ, // Որ *արարչախոս* նպատակը քո Համարեց հոժար [6, 323]:

Այդպես նաև, *դարախոս* նորաբանությունը մեծ կշիռ ունի ոգեղեն մթնոլորտի ստեղծման հարցում: *խոս* բաղադրատարրը կարող էր զուգորդվել այլ գոյականի հետ: Բանաստեղծը փորձ է արել շեշտելու մեր մագաղաթյա

³ *Սալանաբարո* կազմությունը քննելու ենք ածականներին անդրադառնալիս:

մատյանների անցած ուղին, հարմար է գտել դար գոյականի զուգորդումը.
«Որ մեր *դարախոս* մատյանները էլ երբե՛ք, երբե՛ք չեն գաղթի» [6, 342]:

Այդպիսին են նաև *ջերմախոս աղոթք* [6, 301], *սրբախոս գիր* [6, 309],
երանախոս հրեա [6, 311] կազմությունները:

Ինչպես հայտնի է, շատ ժողովուրդների մոտ *սև*-ը սգո նշան է: Լ.Դուր-
յանը պատմական ժամանակների առաջադրած պահանջներին համապա-
տասխան զուգորդում է իմաստով իրար շատ մոտ տարրեր՝ *սև* ածական +
ծուխ, *բոց* գոյականներ՝ ստեղծելով տվյալ ժամանակաշրջանի ցայտուն նկա-
րագիրը:

Բայց մեր գրքերը // Վայրենիք խուժան // Հանձնեցին հրի *սևածուխ* մա-
հին [6, 290]: Իսկ թշնամին, դառած *սևաբոց* կիրք, // Ա՛խ ծվատում է քեզ [6,
336]:

Կապույտ-ը⁴ [5, 94] սովորաբար երազային, եթերային խորհրդանիշն
է: Պոեմում սև-ի հակադրությամբ կերտված են կապույտ և կարմիր բաղա-
դրատարրերով զուգորդված բառամիավորներ: **Կարմիր**-ը արևի գույնն է, որը
խորհրդանշում է նոր կյանք, լույս, ջերմություն: **Կապույտ** և **կարմիր** տարրերի
կիրառությունը պոեմում նույնպես պատճառաբանված է. հյուսվում է հայոց
պատմության ամենավսեմ էջերից մեկը՝ գրերի գյուտը. «Եվ հնոցն արև էր, /
Առավոտի արև, // Ու ծուխը երկինք էր **կապտագանգուր**» [6, 305]:

Կապույտ + **ծուխ** բայահիմքով, **կապույտ** + **լույս** գոյականով, **կապույտ** +
խտիտ բայահիմքով կազմված բառամիավորներով հեղինակը նպաստում է
թեմատիկ բովանդակության ծավալմանը. Դու էլ ես եկել, // Թե քո աշխարհը
կանաչ է հագել, // Իսկ դու հագել ես **կապտածուխ** թիկնոց [6, 307]: Հետո
կապտալույս անձևության մեջ // Ընդգծվեց կարծես // Հայացքը քո մոր [6, 316]:
Նրանց միջև // Հին երգախոս գողթան գավառ // Եվ **կապտախտիտ** երկնքի մեջ
արև կա վառ [6, 320]:

Կարմիր-ը գործածվում է «ուրախություն, բարվոք վիճակ» նշանակու-
թյամբ: Այսպես. հեղինակը մեծ վարպետությամբ զուգակցում է իմաստային

⁴ Անգլերեն դարձվածքներում կապույտ-ը հանդես է գալիս վատ, բացասական իմաս-
տով, օրինակ՝ look through the blue glasses (կապույտ ակնոցով նայել, միայն վատը տեսնել
կյանքում), in the bluis (կապույտի մեջ ընկղմված վիճակում), look (feel) blue (երևալ, զգալ,
կապույտ, վատ տրամադրության մեջ լինել):

տարբեր դաշտերի պատկանող **ծանր** և **կարմիր** բաղադրիչ-միավորները, ստեղծում է **ծանրակարմիր** - ածական + ածական մանրակաղապարով մակ-դրային կիրառությամբ ածականական նորակազմությունը. Ու շարժվեց հա-ճույքը, // Քուրան խենթացնող կուռ հացի մեջ... // Դուրս քաշեց հետո նա // Երկաթե երազն իր **ծանրակարմիր** [6, 306]:

Որոշ նորակազմություններ բաղադրված են **արև** բառամիավորով: **Արևը** վաղուց ի վեր ժողովուրդների մեջ ճանաչվել է որպես կյանքի արարիչ: Շատ դեպքերում այն փոխարինում է **կյանք** բառին և հանդես է գալիս որպես դրա հոմանիշը. Դու միշտ ապագա, դու անկանգ հոսանք, // Դու **արևագիր** պատ-մության հասակ [6, 309]՝:

Աղայանի բառարանում հանդիպում ենք **արևագիր** բարդությունը՝ որ-պես, սակայն, աստղագիտական, ռազմական ոլորտների բառ, (բնատ) արևի նկար, պատկեր [6, 120]: Դուրյանի գործածածը իմաստային նորակազմություն է. Նայում ես հողին Եվ սերմնացանին **արևագոգնոց** [6, 307]: **Արևագոգնոց** – գոյական + գոյական բաղադրատարրերով բանաստեղծը ստեղծել է մակդրա-յին կիրառությամբ ածականական նորակազմ բառույթը:

Պոեմում հաճախադեպ են մարմնի մասեր ցույց տվող արմատ-ձևույթ-ներով բաղադրված նորակազմ համադրական բարդությունները: Մարդկային ներքինի բացահայտման առումով աչքի է ընկնում **սիրտ** [5, 60-61] բառը, որին երբեմն փոխարինում է **հոգի** բառը. Բայց մանկությունից դեռ քեզ հմայող // Պատկերները այդ // Դարձան **սրտամեջ** մտածողություն, // Երբ որ դարձար այր [6, 281]:

Պոեմի թեման պատմական անցյալն է, հետևաբար բանաստեղծը գտել է իր նյութը մատուցելու պատշաճ ձևեր: Երբ հարկ է ներկայացնել մեր սպասումները, հույսերը, երբ Հիսուսից տենչում էինք արշալույս, **սիրտ + զամ**

⁵ Մեր նշած բառարաններում կա **արևագիր** բարդությունը, սակայն որպես իմաստային այլ դաշտի միավոր (արևագիր, գ., 1. գործիք, որով լուսանկարում են արեգակը, 2. արեգակի լուսավորման տևողությունը և ուժը գրանցող գործիք, 3. գործիք՝ տարածության վրա լույսային նշաններ տալու համար) [7, 261]:

⁶ Միևուրեք ճանաչվել է որպես կենտրոնական, կարևորագույն օրգան և խորհրդանշել է շատ զգացումներ: Մարդկային ներքինն արտահայտելը սրտի բնորոշ կողմերից է: Միևուրեք միակ օրգանն է, որով ժողովուրդը այնքան հարուստ կերպով ներկայացնում է մարդու հոգեկան աշխարհը: Այն արտահայտում է տարբեր զգացումներն ու զգացումներ՝ զգայունություն, համ-բերություն, բարկություն, գուր, վեհություն, քաջություն, խրախույս:

բայսհիմքով Լ.Դուրյանն ստեղծում է մակբայական արժեքով **սրտագամ** բառույթը, որի ստեղծումը բոլորովին էլ պատահական չէ տվյալ հյուսվածքում: Նորակազմությունը ձուլվում է խոսքի ընդհանուր հյուսվածքին. Բայց նա մեռած էր, **Սրտագամ** մեռած [6, 329]:

Ձեռքը սովորաբար ուժի ու ղեկավարության գործառույթ ունի: Դիմենք բնագրին. Դու ինձ հոր նման **Ձեռքաջերմ** գրկի՛ր [6, 287]: Նրանք **ձեռքավարժ** արդեն գրում են, Արդեն գրում են՝ Հայոց երկիր [6, 310]:

Բանաստեղծը **ջերմ ձեռքերով** և **վարժ ձեռքերով** բառակապակցությունների փոխարեն ստեղծել է մակբայական արժեքով **ձեռքաջերմ** և **ձեռքավարժ** բառամիավորները:

Այդպիսին են նաև հետևյալ կառուցատիպերը՝ Ու ես **աչքագբաղ** ծանոթանում եմ [6, 378], Թափառեցի՛ր, թափառեցի՛ր **ոսքամաշ** [6, 291], Հանճարությունը **մարմնամեջ** հոգու [6, 300]: **Հովազերախ** բռնության առջև դու կանգնում էիր [6, 301]: **Հոգեժիր** վարպետությամբ բարություն է սփռում անշահ [6, 318]:

Նորակազմ բառերում հաճախված ենք գտնում **յոթ** և **հազար** թվականների զուգորդումները գոյականների հետ.

Համբերությունս անհամբերության // Ձոհն է վերջապես... Անհամբերությունն ալիք **յոթնալեռ** // Բերում է արդեն քեզ իր թևերին [6, 277]: Դու **յոթնապարզ** լեզվով փրկեցիր Քո հայոց լեզուն [6, 326]: Որ ցանես մի բուռ, **Հազարաբեռ** հնձես [6, 308]: Ու չէր խանգարում մեկը մյուսին, Տարբերությունով **հազարապատկեր**[6, 327]:

Վերլուծական բարդությունների ստեղծման մեջ հեղինակը նույնպես ցուցաբերում է մեծ վարպետություն:

Պոեմում հաճախ են կիրառվում անվանական հարադրությունները, որոնք ևս վերածվում են բառ-պատկերների և ձուլվում պոեմի ընդհանուր շղթային: Այդ միտումը **տառ** և **աստված** բառազուգորդումով ստեղծել է **տառ-աստված** անվանական վերլուծական բարդությունը, որն առավել ցայտուն գույներով է երանգավորում անցյալը, ստեղծում ժամանակի բներանգ. Մեր հնախոս ցավի առաջ // Կանգնել էիր դու մենակ, // **Տառ-աստվածներդ** մեզ եղան // Ե՛վ փրկություն, և՛ հենակ [6, 312]:

Գալիքների ձայնով հեռական Մաշտոցը մաքրում էր սերունդները չարից **ցավ-տառապանքով**: Բաղադրիչների սաստկության տարբեր աստիճաններ ցույց տվող հոմանշային հարաբերությամբ կազմված անվանական բարդությունը նոր իմաստային երանգ է հաղորդում նկարագրությանը. Չէիր վախենում, որ քեզ չարչարի // **Ցավ-տառապանքը**, քո կյանքը մաշող [6, 301]: Շարքին հուզական նոր լիցքեր է հաղորդում մեկ այլ բառ-պատկեր. **Արոր-խաչ** ես տեսել քո խաչի մեջ [6, 291]:

Այս հատվածում՝ **խաչ**, որովհետև Մաշտոցը Գողթն գավառում տարածում էր քրիստոնեությունը, **արոր**, որովհետև նա իր աջի մեջ զգում էր արյունը մաճկալի:

Այստեղ նույնիսկ իրար հետ բովանդակությամբ համարյա չառնչվող միավորներ են զուգորդված. նրանց գործածությունը բարդության մեջ, սակայն, բառակազմորեն հիմնավորվում է: Բերենք հետևյալ օրինակները. Սնվում էին ժողովրդված **սեր-գետերով** ... [6, 320]), Քո բիլ սքեմի **ալիք-շփումից** [6, 287], Չթոթափած դեռ հեթանոս **հիր ու հրձվանք** [6, 321], Ապավինեցինք **աղոթք-միրաժին** [6, 329], Ճոճվում էր կախվողի **օձ-պարանոցին** [6, 333], Դառնում էր որպես **արեգակ-անիվ** [6, 342]:

Քննությունը ցույց է տվել, որ «Մաշտոց» պոեմում ածանցավոր նորակազմ բառայինները բարդությունների չափ հաճախված չեն, սակայն ունեն իրենց կշիռն ու դերը պոեմի պոմեի զարգացման մեջ, խոսքին ընդգծված հաղորդում են պատկերավորություն և արտահայտչականություն: Ակտիվ է ինչպես նախածանցների, այնպես էլ վերջածանցների գործառությունը: *Քննության կենթարկվեն «Մաշտոց» պոեմում հանդիպող առավել հաջողված նորակազմ բաղադրությունները*: Ամենից հաճախ է գործածված գոյականակերտ ածանցը – **ություն** -ն է. Եվ նրա համար դու մերը եղար, // Որ **անգղությունը աղավնության** դեմ էլ չհարձակվի, // Որ **ցինությունը** ցրիվ գա ցմահ, // **Աղավնությունը** գոյության ծխով // Ծածանվի, ծփա [6, 313]: Համատարած մթության մեջ // Դու միաձայն **շողություն** [6, 285]:

Է. Աղայանի բառարանում կա **շողում** բառը (շողում, գոյ., շողալը) [6, 1117]: Լ.Դուրյանը նախապատվությունը տալիս է **շողություն** բառին՝ նախորդ տողում գործածված **մթություն** բառի հետ հանգավորման նպատակով, որպեսզի խոսքը դառնում է ավելի բանաստեղծական, հուզական:

Հետաքրքիր կազմություններ են ածականներից **-ություն** ածանցով բաղադրված նորակազմ գոյականները⁷ [11, 527], որոնցով հաճախ շատ բան ենք իմանում տվյալ ժամանակահատվածի մասին. Եվ մտածման **լուսեղություն** Մենք այնպես ենք վարարում, Որ դառնում ենք անչափագիր **Լայնշիություն** մեր հունի [6, 338]. **Լայն** ածականից հեղինակը վարպետորեն կազմել է **լայնշիություն** գոյականը, և դժվար թե ժամանակի այդ էջը ավելի դիպուկ բառերով բնութագրվեր, եթե ոչ **լուսեղություն, լայնշիություն** բառերով:

Հայտնի է, որ **-եղեն** ածանցով բառերը ցույց ն տալիս առարկայի ինչից կազմված, պատրաստված լինել, որը հետագայում իմաստափոխությամբ սկսել է կազմել գոյականներ՝ մի բանից շինված կամ որոշ տեսակի առարկաներ՝ հավաքական նշանակությամբ [1, 252], [10, 158], [12, 260]. Դուրյանն ունի **սրտեղեն** ածականը. Արդեն **սրտեղեն** ձգտումով բարի // Խառնվում եմ քեզ // Որպես հույզի ձայն [6, 278]: Այսպես նաև իմաստային նորակազմություն է **լուսեղեն** բառությամբ՝ գոյականի արժեքով, Է.Աղայանի բառարանում այն նշվում է ածականի արժեքով: Հեղինակը **լուսեղեն** անվանում է Մաշտոցին՝ բառին հաղորդելով իմաստային նոր երանգ: Նշված ձևությամբ ածանցով բաղադրված նորակազմություն է **հուսեղեն** բառը՝ հավաքականության իմաստով. Նա խնդություն դարձավ // Եվ **հուսեղեն** համակ [6, 302]:

Պեմում հանդիպում են բազմաթիվ բաղադրություններ, կազմված մակբայական ածանցներով, **բար(ո)** ածանցով՝ **ցինաբարո, սատանաբարո**. Բյուզանդիոնի և Տիգրանի արանքում ճգնվում էր երկիրը մեր արնաքամ... // Սրտին նրա զարկել էին խենեշ գամ // Ու շղթայել **ցինաբարո**, անզգամ [6, 395]:

Առաջին հայացքից անսովոր ու անսպասելի ածանցումներ են, սակայն բոլորն էլ դառնում են պոեմի լեզվի անբաժանելի բաղադրամասերը՝ ըստ հարկի ընդգծելով, խտացնելով ապրումը, խոհը:

Դուրյանը հասնում է լեզվական բարձր արվեստի, հատկապես երբ գոյականն ու ածականը վերածվում են բայի՝ **-ել, -ալ** մասնիկների միջոցով [2,

⁷ Ածականները գոյականանում են **-ություն** ածանցով, որ այսպիսով կերտում է հատկանիշի գոյական անուններ վերջավանկային հնչյւթների փոփոխության կանոնների ընդհանրական կիրառությամբ:

⁸ Է.Աղայանի բառարանն ունի **սրտեղ** կազմությունը (սրտեղ, ած. (հզվդ), սրտոտ, քաջ, արիասիրտ) [6, 1344]:

48-68], [1, 287-290]: Մրանք բերում են նոր իմաստներ և երանգներ, ոճավորում են խոսքը, նպաստում նրա արտահայտչականությանը:

Անվանական բայերը որոշ շերտ են ներկայացնում «Մաշտոց» պոեմում: Դրանցում անվանական բաղադրիչի իմաստն անցնում է բային. կատարվում է գոյականի վերածում բայի [11, 507, 523]⁹. Ես հասկանում եմ, որ կարողությունն իմ **նպատակված** // Չի լինի լքող [6, 277]¹⁰: Այստեղ եթե հեղինակը բառակազմության այս եղանակին չդիմեր, ապա հարադրավոր բայը նույն արժեքը չէր ունենա պատումի նշված կառուցվածքային հյուսվածքում, ինչը ունի բնագրային ձևը: Այսպես նաև՝ Դրանք արվեստ էին // **Վանդակված** ճորտերի հոգու թռիչքը վեհ [6, 334]: Մեկ այլ խոսքաշղթայում **անապատ դառնալ** հարադրավոր բայի փոխարեն ստեղծել է **անապատվել** նորակազմ բայը. Պիտի հույզերից խոսքով անքուն // Դու ռոռգեիր եությունները **անապատված** [6, 296]:

Անվանակազմ բայերը պոեմում ի հայտ են բերում մի յուրահատկություն ևս: Հեղինակը բայական բառայիններ է ստեղծում ոչ միայն պարզ արմատական անուններից, այլև ածանցավոր և բարդ բառերից. Թող **խնկազօծվի** (բարդ բառից) գոյությունը իմ // Քո բիլ սքեմի ալիք-շփումից [6, 287]: Բայց մեր հավատը // **Արևազերծել** (բարդ բառից) չկարողացան [6, 312]: Քո աչքերը՝ երկու ծովեր, // Սնվում էին // **Ժողովրդված** (ածանցավոր բառից) սեզ-գետերով [6, 320]:

⁹ Գոյական անվան բայացման երկու ուղի կա: 1. Գոյականն առանց լրացուցիչ ածանցական մասնիկների ստանում է բայերին, առանձնապես -ել, -անալ բայերին հատուկ ձևեր՝ պարիսպ-պարսպել, ոսկոր- ոսկրանալ անալ-ով կազմություններում գոյականը սովորաբար գործածվում է փոխանվանաբար՝ որպես հատկանիշի անուն՝ հանդես գալով ածականական արժեքով (տեղի է ունենում իմաստային փոխակերպում՝ գոյականական իմաստ- ածականական, հատկանշային իմաստ - բայիմաստ): Արդի հայերենում բայական մյուս ձևերով (-ալ, -չել, -նել, -ենալ) գոյականը չի կարող անմիջապես բայանալ: Բանաստեղծական լեզվում ել-ով բայացումը շատ ավելի լայն չափեր ունի՝ արևել, լուսնել, աստղել և այլն: 2. Գոյականը բայանում է լրացուցիչ ածանցական մասնիկներով՝ ա) -արկ -ել՝ գործարկել, բ) -ավորել թևավորել, գ) աց-նել - հիպնոսացնել: -Անալ-ով, -ացնել-ով, -ավորել-ով բայերի դեպքում գոյականը ավելի նախնական է, և առկա է գոյականի բայացում՝ ծովանալ, կղզիանալ, գուտ նյութական բնույթի՝ իրերի և անձերի անունները բնականաբար ծագամբ գոյականներ են, վիճականիչ անունները՝ բայափոխներ, հմտ. արծաթ - արծաթել, կնիք - կնքել, բայց՝ ցատկել - ցատկ: Բանաստեղծական լեզվում ավելի հաճախ է նյութական գոյականների փոփոխությունը բայերի՝ արև - արևել, լուսին - լուսնել և այլն:

¹⁰ Է. Աղայանի բառարանում կա **նպատակ դնել, ունենալ** հարադրավոր բայը [6, 1083]:

Կարևոր է նաև այն, որ բանաստեղծը ածականի համապատասխան մասնիկավորումով կազմում է բայ՝ դիմավոր կամ դերբայական ձևով այն ծառայեցնում պատումի տվյալ հատվածի իր նպատակին. Որքան էլ դարձնեն // **Միտումնավորված** զրպարտրանքն անթիվ, // Ձեր ճշմարտության խոսքը կդառնա 22 Առավել բորբոք ու առավել թեժ [6, 332]: Բայց մեր հավատը // **Արևազերծել** չկարողացան [6, 312]:

Դուրյանի պոեմը հասել է հնչեղության ոչ միայն բառակազմական տարբեր եղանակներով նորակազմ բառույթների ստեղծմամբ, այլև մի շարք յուրօրինակ արտահայտություններով, որոնք ներդաշնակում են բառական այլ միավորների, և բանաստեղծի կողմից կերտված շրջասություններ են. այր ճգնավոր [6, 285], միաձայն համանվագ [6, 285], արշալույսի ավետիք [6, 285], փարոսներ պահող ափ [6, 285], սուրբո հայրապետ [6, 290], բարության շտեմարան [6, 319], վերապարզև ոգի լուսափայլ [6, 331], Օշականի սրբազան աճյուն [6, 339], Օշականում անթեղված հավատ [6, 339] և այլն:

Եզրակացություն

Լ.Դուրյանը «Մաշտոց» պոեմում բառային նորակազմությունների գործառությամբ հասել է դարաշրջանի խոսքային գունավորման: Բանաստեղծը կիրառել է բարդությունների գրեթե բոլոր տեսակները և տարատեսակները, որոնք ավելի են խորացնում սերը դեպի հայոց գիրը:

Գրականության ցանկ

1. Աբեղյան Մ. Խ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, 699 էջ:
2. Աբրահամյան Ա. Ա., Բայը ժամանակակից հայերենում, Ե., 1962, 729 էջ:
3. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, 1615 էջ:
4. Աղայան Է.Բ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, 372 էջ:
5. Գևորգյան Ե. Հ., Հայերենի դարձվածքները, Ե., 1969, 136 էջ:
6. Դուրյան Լ. Մ., Բերդ (բանաստեղծություններ, պոեմներ), Ե., 1983, 352 էջ:

7. «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», Ե., հ. 1-4, 1969-1980, 601, 714, 574, 826 էջ:
8. Հայրապետյան Լ.Գ., Վահագն Դավթյանի խոսքարվեստը, Ե., 1999, 148 էջ:
9. Մալխասեանց Ստ. Ս., Հայերեն բացատրական բառարան, Ե., հ. 1, 2010, 608 էջ, հ. 2, 2010, 512 էջ, հ. 3, 2010, 614 էջ, հ. 4, 2010, 646 էջ:
10. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե., 1989, 319 էջ:
11. Ջահուկյան Գ. Բ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե., 1974, 589 էջ:
12. Մարգարյան Ա. Ս., Ժամանակակից հայոց լեզու, բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն, Ե., 1990, 402 էջ:
13. Պապոյան Ա. Հ., Չափաձույի լեզվական արվեստի հարցեր, Ե., 1976, 307 էջ:
14. Պետրոսյան Հ. Զ., Հայերենագիտական բառարան, Ե., 1987, 686 էջ: